

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած պետության սահմանադրական կարգի տեսական հիմունքների ուսումնասիրության անհրաժեշտ պայմաններից է այդ հասկացության բովանդակության սահմանումը սահմանադրաիրավական տեսանկյունից և դրա բաղկացուցիչները կազմող տարրերի մատնանշումը: Յուրաքանչյուր երկրի սահմանադրական (պետական) կարգը՝ որպես համալիր հասկացություն, ներառում է ոչ միայն այս կամ այն երկրի պետական կառուցվածքը կամ ամբողջությամբ վերցրած նրա քաղաքական համակարգը, այլ նաև պետության տնտեսական հիմքը, սոցիալ - դասակարգային կառուցվածքը, ազգային - պետական կարգը, քաղաքացիական իրավունքների ու ազատությունների իրական վիճակը:

Իհարկե, տվյալ դեպքում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, այդ թվում՝ «սահմանադրական կարգ» և «պետական կարգ» հասկացությունների երկիմաստ կամ տարաբնույթ բանաձևման վերաբերյալ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ արդարացի կլինի ներկայացնել մասնագիտական գրականության մեջ այդ եզրույթների հարաբերակցության վերաբերյալ առկա երկու հիմնական մոտեցումների նշանակությունը և դրանց տեղայնացումը Չինաստանի սահմանադրական իրավունքի համակարգում¹:

Առաջին մոտեցմամբ, պետական կարգը ընկալվում է որպես սահմանադրական (պետական) իրավունքի նորմերով սահմանվող և ամրագրվող սոցիալական, տնտեսական, վարչական և քաղաքական իրավական հարաբերությունների համակարգ: Ընդ որում, ի տարբերություն սահմանադրական կարգի, պետական կարգի ժամանակ պետության կառուցվածքի սահմանումը պետք է պայմանավորված լինի հասարակության սոցիալ - տնտեսական

սական զարգացման աստիճանով ու երկրում քաղաքական ուժերի առկա հարաբերակցությամբ: Տվյալ դեպքում հասարակության վրա պետության ներգործության ձևերը կրում էին առավելապես ոչ իրավական բնույթ, ինչը ենթադրում էր, որ այդ մոտեցումը բովանդակում էր «քաղաքական տարրեր»²:

Այդպիսի մոտեցումն էր տիրապետում անցյալ դարաշրջանի 90-ական թվականների կեսերին, և դրա հիմնական առանձնահատկությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ պետական կարգի հիմքում դրվում էին բացառապես քաղաքական շարժառիթներ:

Սակայն, հետագայում առանձին հեղինակների կողմից պետական կարգի սահմանման հիմքում դրվեց նաև այն գաղափարը, ըստ որի «Պետական կարգը առկա է այն հասարակությունում, որտեղ ձևավորվել են իրավունքի նորմեր, այսինքն, այն հասարակությունում, որտեղ...առաջացել է կայուն պետություն և պետական իշխանություն»³:

Սահմանադրական կարգի առկայությունը, ըստ այդ մոտեցման կողմնակիցների, հնարավոր էր միայն իրավական, ժողովրդավարական պետությունում, որպիսին, իբրևֆե, չէր հանդիսանում «ամբողջատիրական որիդային Միությունը», որտեղ առավելապես օգտագործվում էր հենց «պետական կարգ» եզրույթը:

Երկրորդ մոտեցման կողմնակիցները գտնում էին, որ «Սահմանադրական կարգը դա Սահմանադրությամբ և սահմանադրաիրավական այլ ակտերով սահմանվող, պահպանվող և պաշտպանվող սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավական հարաբերությունների համակարգ է, որն, ի տարբերություն պետական կարգի, միշտ ենթադրում է պետության իրավական համակարգում Սահմանադրության առկայություն»:

Այս մոտեցման կողմնակիցները սահմանադր-

րական կարգը բնութագրելիս նախանշում էին պարտադիր այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ժողովրդական ինքնիշխանությունը, իշխանության տարանջատումը, մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անխախտելիությունն ու անօտարելիությունը: Ընդ որում, պետական կարգը, ըստ այդ մոտեցման կողմնակիցների, միևնույն ժամանակ «կարող է և չբովանդակել այդպիսի հատկանիշներ»⁴:

Միաժամանակ, նեղ առումով՝ սահմանադրական կարգն ընկալվում է առավելապես սահմանադրությամբ տարանջատված սահմանադրական մի խումբ սկզբունքների ամբողջություն, որոնք կազմում են հասարակական հարաբերությունների կարգավորման հիմք⁵:

Այս հիմնավորման համատեքստում, եթե «պետական կարգ» և «սահմանադրական կարգ» հասկացությունների միջև տարբերությունը պայմանավորված են պետությունում սահմանադրություն ունենալու և սահմանադրական կարգի հիմնարար հատկանիշներով օժտված լինելու հանգամանքով, ապա ՉԺՀ Սահմանադրությամբ սահմանվող և նախաբանում օգտագործվող «սոցիալիստական կարգ» բառակապակցության իմաստաբանական նշանակությունն կարելի է ընկալել ինչպես «պետական կարգ» նշանակությամբ, այնպես էլ՝ «սահմանադրական կարգ» հասկացության իմաստով⁶:

Վերոշարադրյալից հետևում է այն, որ «սահմանադրական կարգ» հասկացության սահմանումը հանդիսանում է համապարփակ (ունիվերսալ) կատեգորիա և, միաժամանակ, սահմանադրականության համակարգագոյացման միջուկը, որը կարող է կիրառվել ցանկացած պետության նկատմամբ՝ անկախ նրա պետական և հասարակական կառուցվածքից, իրավական ու սոցիալական համակարգից, ինչը հատկապես կարևոր է այնպիսի պետությունների սահմանադրական կարգի տեսական հիմնահարցերի ուսումնասիրման ժամանակ, ինչպիսին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն է: Ինչ վերաբերում է սահմանադրական կարգի հիմունքներին, ապա հարկ է նկատել, որ դրանք ընկալվում են որպես սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներ, որոնք ուղղված են պետական իշխանության կազմակերպմանն ու մարդու (քաղաքացու) հետ փոխհարաբերությունների բնույթի սահմանմանը⁷:

Այդ առումով, ՉԺՀ-ի սահմանադրական

կարգի հիմունքների ուսումնասիրությունն անհրաժեշտ է սկսել Սահմանադրությունից⁸: Անհրաժեշտ է նկատել, որ ՉԺՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ պարունակում են սահմանադրական կարգի հիմունքներին առնչվող մի շարք նորմեր, որոնցով սահմանվում են սահմանադրական կարգի տեղը իրավունքի համակարգում, հասարակական հարաբերությունների կարգավորման հիմք հանդիսացող սահմանադրական սկզբունքները և այլն:

Այսպես, Սահմանադրության նախաբանում ամրագրված է. «Չինաստանը երկարատև ժամանակաընթացքում կգտնվի սոցիալիզմի սկզբնական փուլում: Պետության արմատական խնդիրն այն է, որպեսզի «չինական առանձնահատկությամբ» սոցիալիզմի կառուցման ճանապարհին կենտրոնացվեն սոցիալիստական արդիականացման ուժեր: Չինաստանի կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող և մարքսիզմ-լենինիզմի, Մաո Յզեդունու գաղափարներով, Դեն Սյաոպինի տեսությամբ և «երեք ներկայացուցչությունների» գաղափարներով զինված Չինաստանի բոլոր ազգությունների ժողովուրդները այսուհետև նույնպես հավատարիմ կմնան ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրային և սոցիալիստական ուղուն, կշարունակեն բարեփոխումների և հրապարակայնության ուղեգիծը, մշտապես կկատարելագործեն տարատեսակ սոցիալիստական ինստիտուտները, կզարգացնեն սոցիալիստական շուկայական տնտեսությունը, կզարգացնեն սոցիալիստական ժողովրդավարությունը, կամրապնդեն սոցիալիստական օրինականությունը՝ այնպես, որպեսզի սեփական ուժերով և համառ աշխատանքով փուլ առ փուլ իրականացվեն արդյունաբերության, գյուղատնտեսության, պետական պաշտպանության, գիտության և տեխնիկայի արդիականացումը, նպաստել նյութական, քաղաքական և հոգևոր մշակույթի ներդաշնակ զարգացմանն այնպես, որպեսզի մեր երկիրը վերածվի հարուստ, հզոր, ժողովրդավարական, քաղաքակիրթ սոցիալիստական պետության»:

Նախ, անդրադառնանք նախաբանում ամրագրված հետևյալ դրույթի վերլուծությանը. «Չինաստանը երկարատև ժամանակաընթացքում կգտնվի սոցիալիզմի սկզբնական փուլում» դրույթին, որի բովանդակության տակ կարելի է հասկանալ սոցիալիզմի կայացման այն ժամանակաշրջանը, երբ տեղի է ունենում «անցում կապիտալիզմից

սոցիալիզմի»։ Այսինքն, «սոցիալիզմի սկզբնական փուլ» հասկացության նշանակությունը պայմանավորված է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու այնպիսի ժամանակաշրջանի առկայությամբ, որն ավարտվում է սոցիալիստական կարգերի հաստատմամբ։ Միաժամանակ, սոցիալիզմի հետագա ամրապնդմամբ ու զարգացմամբ ստեղծվում են նախադրյալներ արդեն **զարգացած սոցիալիզմի** ավարտուն փուլի անցման համար⁹։

Հատկանշականն այն է, որ սահմանադրական կարգի այդ հիմնադրույթի կենսագործմանն է ուղղված Չինաստանի կոմունիստական կուսակցության ծրագրային դիրքորոշումը, ըստ որի՝ «մարդկային հասարակությունն անխուսափելիորեն կթևակոխի կոմունիզմի դարաշրջան, որը կարող է իրականացվել միայն համակողմանիորեն և բարձր զարգացած սոցիալիստական հասարակարգի հիման վրա։ Կոմունիստական հասարակարգը կլինի այն հասարակարգը, որի պարագայում նյութական հարստությունը կհասնի առատության, բարձր մակարդակի կհասնի մարդկանց հոգևոր զարգացումը, հասարակության յուրաքանչյուր անդամ կկարողանա զարգանալ ազատորեն և համակողմանիորեն»¹⁰։

Ակնհայտ է, որ սահմանադրական կարգի քննարկվող հիմնադրույթը տրամաբանորեն փոխկապվածություն է ապահովում Չինաստանում իրավական պետության կայացման և զարգացած սոցիալիզմի՝ որպես մարդկային արժանապատիվ հասարակության կառուցման սահմանադրական նպատակի հետ։ Չարգացած սոցիալիզմի, այնուհետև՝ կոմունիզմի կառուցման վերաբերյալ սահմանադրական դրույթի առկայությունն ինքնին վկայում է ՉԺՀ Սահմանադրության սոցիալական արժեքավորման մասին, քանի որ վերջինիս միջոցով է ապահովում չին ժողովրդի իշխանության իրականացման ինքնուրույն ու առանձնահատուկ տեսլականը կոմունիստական հասարակարգում։

Այդ նույն տրամաբանության վրա է հիմնված սահմանադրական կարգի հաջորդ կարևոր սկզբունքի բովանդակության բացահայտումն ու իմաստաբանական նշանակությունը, այն է՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հանդիսանում է սոցիալիստական իրավական պետություն։ Այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՉԺՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում, համաձայն որի՝ պետությունն աշակցում է սոցիալիստական իրավական համակարգի միասնականու-

թյանն ու արժանավորմանը. ոչ մի օրենք, հրամանագիր կամ տեղական կանոններ ու հրահանգներ չեն կարող հակասել Սահմանադրությանը, և առանց բացառության՝ բոլոր պետական մարմիններն ու զինված ուժերը, քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները, ձեռնարկություններն ու հիմնարկները պետք է պահպանեն Սահմանադրությունը և օրենքները։

Սահմանադրական հիշատակված և այլ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ Չինաստանի Սահմանադրությունը հանդես է գալիս որպես իրավունքի ողջ համակարգի հենքը, որը կոչված է ապահովելու օրենսդրության տարբեր ճյուղերի միասնությունը, փոխհամաձայնեցվածությունը, դրանց ելակետային սկզբունքների ընդհանրությունը։ Ընդ որում, ՉԺՀ Սահմանադրության այդպիսի դերակատարումն ինքնին վկայում է՝ մի կողմից, իրավունքի ողջ համակարգի համակարգվածության մասին, մյուս կողմից, պետության և հասարակական ինստիտուտների փոխհարաբերությունները կարգավորող իրավական այլ ակտերի նկատմամբ գերակայության ապահովման մասին։

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի հաջորդ կարևոր սկզբունքը, որն ամրագրված է Սահմանադրության 6-րդ հոդվածում, վերաբերում է սոցիալիզմի տնտեսական համակարգին և դրա հիմքը կազմող արտադրության միջոցների սոցիալիստական հանրային սեփականությանը։ Ընդ որում, սահմանադիրը «սոցիալիստական հանրային սեփականություն» հասկացության բովանդակության մեջ նախատեսել է արտադրության միջոցների նկատմամբ սեփականության միայն համաժողովրդական և աշխատավորների կոլեկտիվ սեփականության ձևերի առկայությունը։

Իհարկե, սոցիալիզմի սկզբնական փուլում պետությունը չի բացառում համաժողովրդական սեփականության գերակայության պայմաններում նաև սեփականության մյուս ձևերի զուգահեռաբար գոյությունը։ Սակայն, ըստ Սահմանադրության նախաբանի և հիշատակված հոդվածով ամրագրված դրույթների տրամաբանության, սոցիալիզմի քաղաքական գաղափարախոսությունն այն է, որ սոցիալիստական հանրային սեփականության առկայությունն ինքնին ուղղված է մասնավոր սեփականության ու մարդու կողմից մարդու շահագործման, ինչպես նաև՝ տնտեսական ճգնաժամերի ու

գործազրկության վերացմանը, արտադրողական ուժերի պլանաչափ, անշեղ ու արագ զարգացմանը, արտադրական հարաբերությունների կատարելագործմանը, ժողովրդի բարեկեցության բարձրացմանը և հասարակության յուրաքանչյուր անդամի համակողմանի զարգացմանը:

Եվ այս առումով անհրաժեշտ է կարևորել Սահմանադրության նույն հոդվածով հռչակված սոցիալիզմի հիմնարար սկզբունքի առկայությունը, ըստ որի՝ սոցիալիստական հանրային սեփականությունն իրականացվում է՝ **«յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի»**: Ընդ որում, ուղղակիորեն նշվում է, որ սոցիալիզմի սկզբնական փուլում պետությունը պաշտպանում է տնտեսական այն համակարգը, որի ժամանակ հանրային սեփականությունը գերիշխում է, և զուգահեռաբար զարգանում են սեփականության մյուս ձևերը: Միաժամանակ, Սահմանադրության 11-րդ հոդվածով՝ անհատական և մասնավոր տնտեսությունները, որպես ոչ հանրային հատված, ճանաչվում են սոցիալիստական շուկայական էկոնոմիկայի կարևոր բաղկացուցիչ մասը: Հարկ է նշել, որ Սահմանադրության հույն հոդվածին համապատասխան՝ տնտեսության ոչ հանրային հատվածում պետությունը ստանձնում է այդ տնտեսությունների օրինական շահերի ու իրավունքների պահպանումը, խրախուսում, աջակցում, ինչպես նաև հետևում ու իրականացնում վերահսկողություն այդ հատվածի նկատմամբ:

Ուշագրավ է նաև այսպես կոչված՝ «չինական առանձնահատկությամբ» սոցիալիզմ կառուցելու սահմանադրական պահանջի ամրագրումը, որն իրենից ներկայացնում է սոցիալիստական գաղափարների կենսագործում՝ սեփական ընկալմամբ և Չինաստանի իրողությունների ու առանձնահատկությունների համադրմամբ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի հաջորդ կարևոր առանցքային հիմնադրույթներից է **«ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրան»**, որին, համաձայն Սահմանադրության նախաբանի, պետք է հետևեն Չինաստանում ապրող բոլոր ազգություններն ու ժողովուրդները: Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն. «Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հանդիսանում է բանվոր դասակարգի կողմից ղեկավարվող և բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա հիմնված՝ ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի սոցիալիս-

տական պետություն»:

«Ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրա» հասկացությունն օգտագործվել է դեռևս ՉԺՀ հիմնադիր փաստաթղթերում, որոնցում այն հռչակվել է՝ որպես «անկախ, ժողովրդավարական, խաղաղ, միասնական, ծաղկող և ուժեղ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կառուցելու և ամրապնդելու պետության հիմնական առաքելություն»¹¹:

Հարկ է նկատել, որ «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրա» սահմանադրական կարգի այս սկզբունքը Չինաստանում հայտարարվել է բանվորների և գյուղացիների դաշինքի վրա հիմնված և բանվոր դասակարգի կողմից ղեկավարվող՝ բանվոր դասակարգի, գյուղացիության, մանր բուրժուազիայի, ազգային բուրժուազիայի և այլ հայրենասիրական ժողովրդավարական տարրերի ժողովրդի ժողովրդավարական միասնական ճակատի պետական իշխանություն¹²:

Այդօրինակ ձևակերպումից հետևում էր, որ Չինաստանում սկզբնական շրջանում հռչակվել է անցումային տիպի իշխանություն, որը հետագայում վերածել է սոցիալիստականի: Այդպիսի իշխանությունը՝ որպես բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական ժողովրդավարական դիկտատուրայի տարատեսակ, առավելապես ընկալվել է որպես «հեղափոխական ժողովրդի դիկտատուրա»¹³:

Դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին մասնագիտական գրականության մեջ ՉԺՀ-ում պետական իշխանությունն ևս մեկնաբանվում էր որպես բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական ժողովրդավարական դիկտատուրայի ձևերից մեկը¹⁴: Սակայն, ՉԺՀ 1954 թվականի սեպտեմբերի 20-ի առաջին Սահմանադրությունում ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի մասին հիշատակվեց միայն նախաբանում, ըստ որի՝ «Չին ժողովուրդը ... ստեղծել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայով»¹⁵: Բացի դրանից, նշված Սահմանադրության 1-ին հոդվածը հռչակել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը՝ որպես «ժողովրդի ժողովրդավարական պետություն, որը ղեկավարվում է բանվոր դասակարգի կողմից և հիմնված է բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա»:

«Ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրան», ըստ էության, հանդիսանում է Չինաստա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում պետական իշխանության իրականացման ձևերից մեկը: Չինաստանի Կոմունիստական Կուսակցության հիմնադիր փաստաթղթերով շրջանավում է նաև այն մտտեցումը, ըստ որի՝ «Չինաստանի սահմանադրական կարգն ինքնին ընկալվում է որպես ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրա», ինչը նշանակում է, որ «մի կողմից, երկրի ազգաբնակչության ճնշող մեծամասնություն կազմող աշխատավորները հանդիսանում են պետության տերերը, մյուս կողմից՝ որ դիկտատուրան իրականացվում է սոցիալիզմը վնասող՝ խիստ փոքրաթիվ թշնամական տարրերի նկատմամբ»¹⁶:

Չինաստանի սահմանադրական կարգին ներհատուկ «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրան» կարելի է բնութագրել որպես պետական իշխանության կազմակերպման ու իրականացման այնպիսի ձև, երբ ժողովրդավարական ու ավտորիտար ռեժիմների տարրերը զուգորդվում են ու փոխգործակցում միմյանց հետ՝ ձեռքբերելով միասնական ու ընդհանրական բնույթ, և ուղղվում ժողովրդի ինքնիշխանության արժեքավորմանը:

Ըստ ՉԺՀ գործող Սահմանադրության՝ «Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին», որը «պետական իշխանությունն իրականացնում է ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և տարբեր աստիճանների ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովների միջոցով (Սահմանադրության 2-րդ հոդված): Սահմանադրության 3-րդ հոդվածն իր հերթին հռչակում է. «Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը և տարբեր աստիճանների ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովներն ընտրվում են ժողովրդավարական ճանապարհով, պատասխանատու են ժողովրդի առջև և գտնվում են նրա վերահսկողության ներքո»: Միաժամանակ, նույն հոդվածը սահմանում է, որ՝ «բոլոր պետական վարչական մարմինները, դատական մարմինները և դատախազության մարմինները ձևավորվում են ժողովրդական ներկայացուցիչների ժողովների կողմից, պատասխանատու են նրանց առջև և գտնվում են նրանց վերահսկողության ներքո»: Հիշատակված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Չինաստանում ներկայացուցչական մարմիններն կազմում են պետության մարմինների ողջ համակարգի կազմավորման հիմքը:

Միաժամանակ, ժողովուրդը, Սահմանադրու-

թյան 2-րդ հոդվածի տրամաբանությամբ, տարբեր ձևերով կառավարում է պետական, տնտեսական, մշակութային և հասարակական գործերը: Այդպիսով, պետք է ընդգծել, որ ներկայացուցչական մարմինների համակարգը թերևս չի հանդիսանում եզակի քաղաքական ինստիտուտ, որն օժտված է իշխանական լիազորություններով, այլ այդ համակարգն իրականացնում է միայն **պետական իշխանություն**: Ուստի, ժողովրդի իշխանության իրականացումը հնարավոր է նաև քաղաքական համակարգի այլ ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են հանդիսանում Չինաստանի կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող միասնական ճակատը և նրա աշխատանքներին մասնակցող տարատեսակ ժողովրդավարական կուսակցություններն ու ժողովրդական կազմակերպությունները:

Չինաստանի սահմանադրական կարգի կարևոր սկզբունքներից է պետական իշխանության կազմակերպման «դեմոկրատական ցենտրալիզմը»: Ընդ որում, այս սկզբունքի սահմանադրական ամրագրումը պայմանավորված է ինչպես իշխանության միասնության սկզբունքի իրականացման, այնպես էլ՝ ներկայացուցչական մարմիններին այդ իշխանության իրականացման լիազորությունների վերապահման անհրաժեշտությամբ:

Որպես կանոն, ՉԺՀ Սահմանադրության մեջ խոսք չի գնում «իշխանությունների տարանջաման» սկզբունքի և պետական մարմինների միջև փոխհարաբերություններում դրանից բխող «զուպումների և հակակշիռների» համակարգի անհրաժեշտության մասին: Սակայն, բոլոր դեպքերում, ՉԺՀ Սահմանադրությունը ելնում է այն իրողությունից, որ պետական իշխանության միասնությունը, թեև ենթադրում է պետական մարմինների միջև իրավասությունների սահմանազատում, այնուամենայնիվ պահանջում է կարևորագույն պետական լիազորությունների փոխանցում ժողովրդական ներկայացուցչության մարմիններին:

Չինաստանում ժողովրդական ներկայացուցիչների բոլոր աստիճանի ժողովները ձևավորվում են ընտրությունների միջոցով: Հանդիսանալով պետության քաղաքական հիմքը՝ ժողովրդական ներկայացուցչության մարմինները հաստատում են երկրի հիմնարար ուղեգիծը և քաղաքականությունը, ուղղակիորեն կամ անուղղակի կազմավորում են մյուս բոլոր պետական մարմինները, որոնք այս կամ այն ձևով պատասխանատու են և հաշվետու

նրանց առջև:

ՉԺՀ-ի սահմանադրական կարգի հաջորդ կարևոր հիմնադրույթներից է Սահմանադրության մակարդակում գաղափարատեսական բաղադրիչի կամ պետության պաշտոնական գաղափարախոսության ամրագրումը:

Սահմանադրությամբ սահմանվել են քաղաքական ուղեգծի անմիջական խնդիրները, այդ թվում՝ բարեփոխումների և հրապարակայնության ապահովման, սոցիալիստական տարբեր ինստիտուտների կատարելագործման, սոցիալիստական օրինականության ամրապնդման, սոցիալիստական շուկայական տնտեսության ու ժողովրդավարության զարգացման բնագավառներում: Ժամանակակից փուլում պետության նպատակն է փուլ առ փուլ իրականացնել արդյունաբերության, գյուղատնտեսության, պետական պաշտպանության, գիտության ու տեխնիկայի արդիականացում, նպաստել նյութական, քաղաքական և հոգևոր մշակույթի ներդաշնակ զարգացմանը՝ այն հաշվով, որպեսզի ՉԺՀ-ն վերածվի հարուստ, հզոր, ժողովրդավարական, քաղաքակիրթ սոցիալիստական պետության:

ՉԺՀ Սահմանադրության նախաբանում և տեքստում հիշատակվում են պաշտոնական գաղափարախոսության չորս հիմնական ուղղությունների առկայության ու դրանց միասնության ապահովման մասին: Դրանք են՝ «մարքսիզմ-լենինիզմ» գաղափարական ուղղությունը, «Մաո Յզեդունու գաղափարները», «Դէն Սյաոպինի տեսությունը» և «Երեք ներկայացուցչությունների» չինական գաղափարախոսությունը: Վերլուծենք դրանք:

«Մարքսիզմ-լենինիզմի» տեսական հիմունքները Չինաստան են ներմուծվել առաջին հերթին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության և նախկին Խորհրդային Միության փորձի տարածման կապակցությամբ: Ուստի, դրա հասկացությունը և գիտատեսական հիմունքները Խորհրդային Միությունում և Չինաստանում լիովին նույնական են:

«Մարքսիզմ-լենինիզմն», ըստ Սահմանադրության նախաբանի և չինական գաղափարախոսության տրամաբանության, ընկալվում է որպես փիլիսոփայական, տնտեսագիտական, աշխարհաճանաչողության, աշխարհի հեղափոխական վերակառուցման, հասարակության, բնության ու մարդկային մտածողության զարգացման օրենքների, բանվոր դասակարգի, աշխատավորների՝ հանուն կապիտալիզմի տապալման հեղափոխական

պայքարի, սոցիալիստական ու կոմունիստական հասարակության կառուցման օրենքների մասին գիտական հայացքների համակարգ:

Չինաստանում գաղափարական այդ համակարգը միշտ կարևորվել է իր դերակատարմամբ, ընդհուպ մինչև՝ «մարդկային հասարակության պատմական զարգացման օրենքները բացահայտող և ճշգրիտ ու հզոր կենսական ուժով օժտված դրույթներ բովանդակող գաղափարախոսության»¹⁷:

Ինչ վերաբերում է այսպես կոչված՝ **«Մաո Յզեդունու գաղափարներին»**, ապա անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ այն ոչ միանշանակ է մեկնաբանվում¹⁸: Ընդ որում, շատ հաճախ աղավաղվում է բուն եզրույթի իմաստաբանական նշանակությունը՝ ընկալվելով որպես կոնկրետ «անձի» կամ «անհատի» գաղափարների և հայացքների ամբողջություն:

Ի տարբերություն այս մտտեցման, չինական մասնագիտական աղբյուրագիտության մեջ այդ եզրույթը գործածվում է առավելապես պետության քաղաքական գաղափարախոսության ու պաշտոնական հայացքների համակարգի համատեքստում: Այդպիսի դիրքորոշում՝ իր հստակ ամրագրումն է ստացել, օրինակ, Չինաստանի Կոմունիստական Կուսակցության կանոնադրությունում, ըստ որի՝ «Մարքսիզմ-լենինիզմի հիմնական դրույթները միավորելով չինական հեղափոխության կոնկրետ պրակտիկայի հետ՝ չին կոմունիստները՝ հանձին իրենց գլխավոր ներկայացուցչի՝ ընկեր Մաո Յզեդունու, ստեղծել են «Մաո Յզեդունու գաղափարները»: «Մաո Յզեդունու գաղափարները»՝ որպես Չինաստանում մարքսիզմ-լենինիզմի կիրառման և զարգացման արդյունք, իրենից ներկայացնում է որպես ճշգրիտ ու պրակտիկայով հաստատված չինական հեղափոխության և չինարարության տեսական սկզբունքների ու ընդհանրացված փորձի, ինչպես նաև Չինաստանի կոմունիստական կուսակցության հավաքական (կոլեկտիվ) բանականության ամբողջություն»:

«Դէն Սյաոպինի» տեսությունը չինական մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում է որպես մարքսիզմ-լենինիզմի հիմնական դրույթների՝ ժամանակակից Չինաստանի պրակտիկայի հետ միավորման և դրսևորման արդյունք: Այն հռչակվել է որպես Չինաստանի պետական գաղափարախոսական համակարգի տարր և «իրենից ներկայացնում է «Մաո Յզեդունու գաղափար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների» շարունակությունն ապահովող գաղափարախոսության ուղղություն ՉԺՀ պատմական նոր պայմաններում»¹⁹ :

«Դէն Սյաոպինի» տեսությունը ձևավորվել է ՉԺՀ-ի հռչակումից հետո ընկած ժամանակաշրջանում դրական և բացասական փորձի ընդհանրացման արդյունքում, իսկ 1997 թվականից հետո այն վերածվեց բազմապլանային «ավարտուն գիտական համակարգի»²⁰ : Չինաստանի սահմանադրականագետները հատուկ ուշադրություն են դարձնում դրա հիմնական հայեցակետերի կենսագործմանը, այդ թվում՝ այդ սահմանադրականագիտության տեսության զարգացման, քաղաքական գաղափարախոսության և տնտեսագիտական փիլիսոփայության մասերով: Տեսության գործնական նշանակությունը պայմանավորված է երկու հիմնական տարրերի համադրմամբ, դրանք են՝ առաջին՝ պետական ու կուսակցական շինարարության փոխարինումը տնտեսության արդյունավետ կառավարմամբ, երկրորդ՝ անցում տնտեսական բարեփոխումների և դրանց հրապարակայնության ապահովման:

Երկրի իրավական քաղաքական կյանքում «Դէն Սյաոպինի» տեսության հիմքում ընկած չորս հիմնական սկզբունքները գրեթե համընկնում է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին: Դրանք են՝ սոցիալիստական կարգի սահմանում, ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի հաստատում, Չինաստանի Կոմունիստական Կուսակցության ղեկավար դերի ապահովում և «մարքսիզմ-լենինիզմի» հետ «Մաո Յզեդունու» գաղափարների սերտաճում: Պատահական չէ, որ հենց այս տեսության կենսագործմամբ ուրվագծվեց «չինական յուրահատկությամբ» սոցիալիզմ կառուցելու պետական քաղաքականության ռազմավարությունը:

Ինչ վերաբերում է **«Երեք ներկայացուցչությունների» գաղափարախոսությանը**, ապա հարկ է նշել, որ դրա հիմքում ընկած է Չինաստանի կոմունիստական կուսակցության դերի վերաբերյալ յուրահատուկ գաղափար: Եթե նախկինում կուսակցության դերը պայմանավորված էր միայն բանվոր դասակարգի առաջնորդմամբ կամ ղեկավարմամբ, ապա այս գաղափարախոսության ներդրմամբ Չինաստանի կոմունիստական կուսակցության գաղափարական հիմքում ընկած են հետևյալ երեք ուղղությունները. ա) առաջավոր արտադրողական ուժեր, բ) առաջադիմական հոգևոր մշակույթ, գ) ժո-

ղովրդական զանգվածների արմատական շահեր²¹ : Ընդ որում, այս գաղափարախոսությունն ուղղված է «մարքսիզմ-լենինիզմի», «Մաո Յզեդունու» գաղափարների ու «Դէն Սյաոպինի» տեսության միասնության, շարունակականության ու զարգացման ապահովմանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ ՉԺՀ սահմանադրական կարգի հիմունքներում ուղղակիորեն այլ մեկնաբանությամբ ու նշանակությամբ է ներկայացվում ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման համընդհանուր սկզբունքը: Այսպես, Սահմանադրության 4-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր ազգություններն իրավահավասար են, միաժամանակ, արգելվում է խտրականությունն ու ճնշումը ցանկացած ազգության նկատմամբ, ինչպես նաև ազգությունների համախմբվածությանն ու նրանց պառակտմանն ուղղված ցանկացած գործողության կատարումը: Ընդ որում, Սահմանադրության նույն հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ Չինաստանում գոյություն ունի շրջանային ազգային ինքնավարության համակարգ, սակայն՝ առանց ինքնավարության հաստատման իրավունքի:

Այսպիսով, ընդհանրացված կարգով կարելի է ներկայացնել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի հիմնական այն սկզբունքները, որոնք ինքնին ունեն իրենց դրսևորման առանձնահատկությունները.

1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հանդիսանում է իրավական սոցիալիստական պետություն,
2. Չինաստանում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և տարբեր աստիճանների ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովների միջոցով,
3. պետությունը հանդիսանում է բանվոր դասակարգի կողմից գլխավորող և բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա հիմնված ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրա,
4. սոցիալիստական կարգը ճանաչվում է որպես Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնական կարգ,
5. ՉԺՀ-ի Սահմանադրության մակարդակում ամրագրվել է գաղափարատեսական բաղադրիչը կամ պետության պաշտոնական գաղափարախո-

սությունը,

6. Չինաստանի կոնունիստական կուսակցության՝ որպես ղեկավար քաղաքական ուժի անբազմամբ Չինաստանի սահմանադրական կարգում հաստատվում են այսպես կոչված «կուսակցական պետության» տարրեր,

7. պետական մարմինների կազմակերպման հիմքում ընկած է «դեմոկրատական ցենտրալիզմ» սկզբունքը:

Այսինքն, Չինաստանում սահմանվել են սահմանադրական կարգի այնպիսի հիմնական սկզբունքներ, որոնցում թեև զուգորդվում են ժողովրդավարական ու ավտորիտար ռեժիմների տարրեր, այնուամենայնիվ դրանք կրում են ընդհանրական բնույթ և ուղղվում ժողովրդի և պետության ինքնիշխանության արժեքավորմանը:

¹ Гудошников Л. М. Эволюция государственного строя КНР // Государственный строй и важнейшие социально-экономические проблемы КНР (Тезисы международной научной конференции 5-7 апреля 1982 г.). М.: Институт Дальнего Востока АН СССР, 1982. С. 6., Чупанов А.С., Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), Автореф. дисс. канд. юрид. наук. М.: 2006. С. 11 և ուրիշներ:

² Մանրամասն տես՝ Юридический энциклопедический словарь / Под общ. ред. Крутских Б.Е. М.:Инфра-М, 2003. С. 70, Арутюнян Г.Г., Баглай М.В., Конституционное право: Энциклопедический словарь. М.: Норма, 2006. С. 112 և ուրիշներ:

³ Марченко А.Н. Государственный строй: политико-правовой аспект // Конституционное и муниципальное право, 2011, выпуск 4. С. 13.

⁴ Конституционное право России: Энциклопедический словарь / Под общей ред. Червонюка В. И. - М.: Юрид. лит., 2002. С. 63.

⁵ Պողոսյան Վ.Վ. Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան, Երևան, 2001, էջ 201:

⁶ Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ առավել գործածական է «սահմանադրական կարգ» հասկացությունը, թեև այն և «պետական կարգ» հասկացությունը նույնական չեն: Այս հասկացությունների վերաբերյալ առկա է այսպես կոչված ռացիոնալիստական (բանական) մոտեցումը, ըստ որի. 1) «պետական կարգ» և «սահմանադրական կարգ» հասկացությունների միջև տարբերությունը պայմանավորված է պետությունում սահմանադրության առկայությամբ, 2) «պետական կարգը» ավելի լայն հասկացություն է, քան սահմանադրական կարգը, ինչը պայմանավորված է այնպիսի հատկանիշների առկայությամբ, ինչպիսիք են՝ պետության ինքնիշխանություն, իշխանությունների տարանջատում, մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անխախտելիության և անօտարելիության հնարավոր բացակայություն և այլն: Անհրաժեշտ է նաև նշել պրոֆեսոր Վ. Ի. Չերվոնյուկի մոտեցումը, ով «պետական կարգը» չի առանձնացնում «սահմանադրական կարգից», միայն սահմանափակվելով սոսկ դրանց ոչ նույնականության արձանագրմամբ: Տես՝ Борисин А. Б. Государственный строй // Большой юридический энциклопедический словарь. М.: Книжный мир, 2005. С. 273, Конституционное право России: Энциклопедический словарь / Под общей ред. Червонюка В. И. - М.: Юрид. лит., 2002, С. 63, Марченко А.Н. Государственный строй: политико-правовой аспект // Конституционное и муниципальное право 2011, выпуск 4, Арутюнян Г.Г., Баглай М.В. Նույն աշխատության մեջ, էջ 224 և ուրիշներ:

⁷ Арутюнян Г.Г., Баглай М.В. Նույն աշխատության մեջ, էջ 307:

⁸ Конституция Китайской Народной Республики / Конституции государств Азии. В 3 томах. Том 3. Дальний Восток / Под ред. Хабриевой Т.Я. М.: 2010, 1040 р., տես նաև՝ Համառոտ Չինաստանի մասին, Եր., 2009, էջ 8:

⁹ Советский энциклопедический словарь / Гиляров М. С., Гусев А. А., Кнунянц И. Л. и др. / Гл. ред. Прохоров А. М. М., 1985. С. 1242-1243.

¹⁰ Устав Коммунистической партии Китая. “Новый Китай” (Синьхуа), 2002.

¹¹ Առանձին հիմնադիր փաստաթղթերում օգտագործվում է նաև «Ժողովրդական ժողովրդավարական ղիկապետություն»: Տես՝ Законодательные акты Китайской Народной Республики. М., 1952, էջ 35:

¹² Законодательные акты Китайской Народной Республики. М., 1952. С. 50.

¹³ Ленин В.И. К истории вопроса о диктатуре, Т. 41. С. 383-384.

¹⁴ Марксистско-ленинская общая теория государства и права. Исторические типы государства и права. М., 1971. С. 593.

¹⁵ Конституция и основные законодательные акты Китайской Народной Республики. М., 1985. С. 29.

¹⁶ Материалы XII Всекитайского съезда Коммунистической партии Китая. М., 1986. С. 46.

¹⁷ Дун Юньху. Важный шаг в развитии прав человека в Китае. // Материалы Агентства Синьхуа 09.01.2006.

¹⁸ Մասնագիտական գրականության մեջ օգտագործվում է նաև «Մաո Յզեդունյան գաղափարներ» ձևակերպմամբ,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդ որում, դա ընկալվում է որպես Մաո Ցզեդունու հայացքների ու գաղափարների ոչ միայն ամբողջություն, այլ նաև՝ համակարգ: Տես նաև՝ Шкиттина Д.А. Особенности конституционно-правового регулирования экономической системы Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 2011, Игнатенко Г.В., Система представительных учреждений Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 1956, Чупанов А.С. Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), дисс. канд. юрид. наук. М.: 2006, Куманин Е.В. Юридическая политика и правовая система Китайской Народной Республики. Автореф. дис. ... д-ра юрид. Наук, М., 2001, Степанова Т.В. Идентификация правовой системы Китайской Народной Республики: вопросы теории. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 2002:

¹⁹ Устав Коммунистической партии Китая. 14.11.2002. С. 16.

²⁰ Չինաստանում Մաո Ցզեդունու գաղափարների և Դեն Սյաոպինի տեսության դիտարկումը դրանց ամբողջականության մեջ կոչվում է այսպես կոչված՝ «չինականացված մարքսիզմ»: Տես նաև՝ Ганшин В.Г. Китай и его соседи: на пути к гражданскому обществу, М.: Институт Дальнего Востока РАН, 2004, С. 122-139:

²¹ Այս գաղափարախոսությունն առաջին անգամ առաջ է քաշվել ՉԿԿ գլխավոր քարտուղար Յյան Ցզենինի կողմից 2000 թվականի մայիսի 18-ին հրատարակված «XXI դարի «երեք ներկայացուցչությունների» գաղափարը» հոդվածում:

РЕЗЮМЕ

Основы и особенности конституционного порядка Китайской Народной Республики

В представленной работе исследованы основы и особенности конституционного порядка в контексте Конституции Китайской Народной Республики 1982 года. В итоге автор пришел к выводу, что в современном Китае определены основные принципы конституционного порядка, в которых, несмотря на то, что элементы демократического режима сочетаются с элементами авторитарного режима, тем не менее они имеют всеобщий характер и направлены на достойному уважению суверенитета народов и государства.

Ключевые слова: Конституция Китайской Народной Республики, конституционный порядок, основы конституционного порядка, принципы конституционного порядка.

SUMMARY

Principles and features of the constitutional order of the People's Republic of China

In the present paper the principles and features of the constitutional order in the context of the Constitution of the People's Republic of China in 1982. As a result, the author came to the conclusion that in contemporary China, the main principles of the constitutional order, in which, despite the fact that the elements of a democratic regime combined with elements of the authoritarian regime, however, they are universal in nature and aimed at a decent respect for the sovereignty of nations and states.

Keywords: Constitution of the People's Republic of China, the constitutional order, the foundations of constitutional order, the principles of constitutional order.